

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ
ԴՐԱՆՑ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԲԱՌԵՐԻ ՈՐՈՇՉԱՅԻՆ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համեմատվող երկու լեզուներում էլ դերանունները հանդես են գալիս որպես փոխարկիչներ՝ նախադասության մեջ հիմնականում փոխարինելով գոյականների և ածականների, երբեմն նաև թվականների ու մակբայների: Սակայն հայերենում և ֆրանսերենում դերանվանը հատուկ չէ շարակարգային և հարացուցային միատեսակ բաշխումը: Եվ քանի որ դերանուն խոսքի մասը, որպես փոխարկիչ՝ հանդես գալով, նախադասության մեջ փոխարինում է գոյականին, ածականին, թվականին և մակբային, և հաշվի առնելով այն, որ որոշիչ դերում կարող են հանդես գալ հիմնականում ածականական և թվականական դերանունները, նախ պարզենք, թե որ դերանուններն են որոշչային կիրառություն ունենում երկու լեզուներում՝ առանձին-առանձին: Դրա համար նախևառաջ անհրաժեշտ է որոշել դերանունների խոսքիմասային փոխարկման սահմանները հայերենում և ֆրանսերենում¹:

Հայերենի անձնական դերանունների ուղիղ ձևերին (ես, ինքս, դու, ինքդ, նա, ինքը, մենք, ինքներս, դուք, ինքներդ, նրանք, իրենք) համապատասխանում են ֆրանսերենի շեշտված (moi, toi, lui, elle, nous, vous, eux, elles) և անշեշտ ենթակա (je, tu, il, elle, nous, vous, ils, elles) անձնական դերանունները (pronoms personnels toniques et atones sujets), որոնք նախադասության մեջ ենթակայի դեր են տալիս: Օրինակ՝ *Ես ինքս կխոսեմ նրա հետ*: - *Je lui parlerai, moi. Armand et moi nous le suivions à quelques pas. - Արմանն ու ես մի քանի քայլ հեռավորությամբ նրան էինք հետևում*:

Ֆրանսերենի շեշտված անձնական դերանունները նախադասության մեջ կարող են նաև գոյականական անդամի լրացում լինել՝ համապատասխանելով հայերենի քացահայտչին կամ հատկացուցչին (նախդիրների հետ գործածվելիս): *C'est elle, la petite morte, derrière les rosiers* (AR, էջ 240). - *Այդ նա է՝ փոքրիկ մեռյալը, վարդենիների հետևում (ԱՌ, էջ 112): Et souvent il s'emporte contre moi, moi, la pauvre âme* (AR, էջ 218). - *Եվ հաճախ՝ նա կատաղում է ինձ վրա, ինձ՝ խեղճուկրակ հոգուս (ԱՌ, էջ 94): C'est notre sort, ô nous, cœurs charitables ...* (AR, էջ 221) - *Այդպիսին է մեր բախտը, մեր՝ գթառատ սրտերի...* (ԱՌ, էջ 97) *Ce sont les maisons ô eux. - Սրանք նրանց տներն են*:

¹ Դերանվան խոսքիմասային սահմանները նույնը չեն երկու լեզուներում:

Հայերենի սեռական հոլովով դրված անձնական դերանուններին (իմ, քո, նրա, մեր ձեր, նրանց) համապատասխանում են ֆրանսերենի ստացական ածականները (mon, ton, son, ma, ta, sa, mes, tes, ses, notre, votre, leur, nos, vos, leurs) և ինչպես արդեն նշեցինք, շեշտված անձնական դերանունները՝ նախդիրների ուղեկցությամբ: Ֆրանսերենի ստացական ածականները նախադասության մեջ ինքնուրույն կիրառություն չունեն, միշտ գործածվում են լրացյալի հետ միասին՝ կատարելով հատկացուցչի պաշտոն: Օրինակ՝ *մեր տունը* – *notre maison*, *նրանց մեքենան* – *leur voiture* և այլն:

Հայերենի *իմ, քո, նրա, մեր ձեր, նրանց* ձևերը նախադասության մեջ կարող են ինքնուրույն կիրառություն ունենալ, հոդ ստանալ և հոլովվել՝ համղես գալով ստորոգելիական վերադրի, ենթակայի կամ չբայական այլ անդամի լրացման պաշտոնում: Այս դեպքում նրանց համապատասխանում են ֆրանսերենի ստացական դերանունները (*le mien, le tien, le sien, la mienne, la tienne, la sienne, les miens, les tiens, les siens, les miennes, les tiennes, les siennes, le nôtre, le vôtre, le leur, la nôtre, la vôtre, la leur, les nôtres, les vôtres, les leurs*), որոնք նույնպես երբեք գոյականական լրացման պաշտոնում հանդես չեն գալիս²: Օրինակ՝ *Գրիչս կորցրել էմ, տուր քոնը*: - *J'ai perdu mon stylo, donne-moi le tien*.

Հայերենի հայցական հոլովով դրված անձնական դերանուններին (ինձ, քեզ, նրան, մեզ, ձեզ, նրանց) համապատասխանում են ֆրանսերենի խնդիր անձնական դերանունները (*me, te, le, la, lui, nous, vous, les, leur*) կամ շեշտված անձնական դերանունները՝ նախդրային կապակցությամբ: Օրինակ՝ *Գրի՛ր նրան*: - *Ecris-lui!*

Հայերենի անձնական դերանունների մյուս հոլովված ձևերին համապատասխանում են ֆրանսերենի շեշտված անձնական դերանունները՝ նախդրային կապակցություններով: Օրինակ՝ *Նա դա անում է ինձ համար*: - *Il le fait pour moi. La résolution du Parlement polonais ... est adressée à l'Union européenne pour lui rappeler aujourd'hui ... (LM) – Լեհական խորհրդարանի որոշումը ... ուղղված է Եվրամիությանը նրան այսօր հիշեցնելու համար...*

Հայերենի ցուցական դերանուններին (այս, այդ, այն, սա, դա, նա, մինևույն, սույն, նույն, մյուս, այսպիսի, այսպես, այդպես, նույնպես, այնպես, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ) ֆրանսերենում համապատասխանում են ցուցական դերանունների պարզ (*celui, celle, ceux, celles*), բաղադրյալ (*celui-ci, celle-ci, ceux-ci, celles-ci, celui-là, celle-là, ceux-là,*

² Նկատենք, որ հին ֆրանսերենում ստացական ածականները ձևով նման են եղել այսօրվա ստացական դերանուններին, և գոյականական լրացման դերում նրանց կիրառությունը հնարավոր է եղել: Օրինակ՝ *un sien crayon* – *նրա մատիտը*.

celles-là) և չեզոք ծները (ce, ceci, cela, ça), անորոշ (tel - այսպիսի, même – նույն, միևնույն, autre- մյուս) ու ցուցական (ce, cet, cette, ces) ածականները, ինչպես նաև համեմատություն արտահայտող aussi, tant, autant, si, tellement, տեղ ցույց տվող ici, là մակբայները: Մյուս դերանունը ֆրանսերենում առավել հաճախ թարգմանվում է autre բառով, որը կախված այն հանգամանքից, թե նախադասության ինչ անդամ է, ֆրանսերենում անորոշ ածական է կամ դերանուն: Օրինակ՝ *Ես տեսա մյուս աղջկան:* - *J'ai vu l'autre fille.* *Ես տեսա մյուսին:* - *J'ai vu l'autre.* Առաջին դեպքում այն անորոշ ածական է, երկրորդում՝ դերանուն:

Որոշչային կիրառություն ունեն ֆրանսերենի ցուցական և անորոշ ածականները, համեմատություն արտահայտող մակբայները և հայերենի հատկանիշ արտահայտող՝ ածականական կիրառություն ունեցող ցուցական դերանունները: Օրինակ՝ *Ce régime autonome est un système mixte (LM).* *Ինքնավար այդ վարչակարգը խառը համակարգ է:*

Et le même document relève que la décision a été prise ... (LM) - Եվ միևնույն փաստաթուղթը բացահայտում է, որ որոշումը ընդունվել էր...

Սա այն նույն աղջիկն է: - *C'est la même fille.*

Նրա զգեստը նույնքան գեղեցիկ է: - *Sa robe est aussi belle.*

Հայերենի այն (նաև՝ այս, այդ) հարաբերային ֆրանսերենում համապատասխանում են որոշյալ հոդերը՝ *le, la, les:* Սակայն եթե այն-ը նախադասության մեջ որոշչի դեր է կատարում, ապա ֆրանսերենի հոդերը նախադասության որևէ պաշտոնի դերում հանդես չեն գալիս: Օրինակ՝

Ես տեսա այն տղային, որը քեզ նվիրել էր այս ծաղիկները: - *J'ai vu le garçon qui t'avait offert ces fleurs.*

Հայերենի սեռական հոլովով դրված ցուցական դերանունները նախադասության մեջ կարող են հատկացուցչի պաշտոն կատարել: Ղրանց ֆրանսերենում համապատասխանում են ցուցական դերանունները՝ նախդիրների ուղեկցությամբ: Օրինակ՝ *Սա դրանց նամակն է:* - *C'est la lettre de ceux-ci.* Այսպիսով, հայերենի ցուցական դերանուններին համապատասխանում են ֆրանսերենի ցուցական և անորոշ ածականներն ու դերանունները, ինչպես նաև տեղի, համեմատության ու ձևի հարաբերություններ արտահայտող մակբայները:

Հայերենի փոխադարձ դերանունները ֆրանսերեն են թարգմանվում բայի դերանվանական ձևով կամ լեզվական համապատասխան միավորներով, որոնք, ինչպես և հայերենի փոխադարձ դերանունները, նախադասության մեջ

բացառապես բայական անդամի լրացման պաշտոնում են հանդես գալիս:
Օրինակ՝ *Նրանք սիրում են մեկմեկու: - Ils s'aiment. Կամ Il s'aiment, l'un l'autre.*

Նրանք միմյանց հանդիպեցին երեկ: - Ils se sont rencontrés hier.

Հայերենի որոշյալ (ամեն(ը), ամեն մի, ամեն մեկը, ամենքը, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), ամեն ինչ, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ողջ(ը), ամբողջ(ը), համայն, ամենայն), անորոշ (ինչ-որ, ինչ-ինչ, ոմն, մեկը, մի քանիսը, մի քանի, ուրիշ, այլ, այսինչ, որոշ, որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե, մեկն ու մեկը) և ժխտական (ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը) դերանուններին համապատասխանում են ֆրանսերենի անորոշ ածականներն ու դերանունները՝ adjectifs et pronoms indéfinis: Ֆրանսերենի անորոշ ածականները (aucun, autre, maint, nul, quelque, quelconque, tout, chaque, même, certain) բնութագրում են գոյականին՝ նախադասության մեջ որոշչային կիրառությամբ հանդես գալով՝ *quelques livres - որոշ գրքեր, aucun bruit - ոչ մի աղմուկ, nulle part -- ոչ մի տեղ:*

Իրենց այս գործածությամբ էլ հիմնականում տարբերվում են անորոշ դերանուններից (on, personne, quiconque, rien, autrui, quelque chose, chacun, tout), որոնք նախադասության մեջ փոխարինում են գոյականին, ունեն առավել ինքնուրույն գործածություն: Եվ ի տարբերություն ածականների, նախադասության մեջ անփոփոխ են մնում: Օրինակ՝ *Personne ne parle. - Ոչ ոք չի խոսում: On pense à chacun. - Մտածում ենք յուրաքանչյուրի մասին: Ce n'est rien. - Ղա ոչինչ է:*

Որոշ անորոշ ածականներ, նախադասության մեջ ինքնուրույն գործածվելով, անորոշ դերանվան դեր են խաղում: Օրինակ՝

*tous sont prêts - բոլորը պատրաստ են,
les femmes des autres - ուրիշների կանայք,
les fautes de certains - ոմանց սխալները:*

Ինչպես երևում է օրինակներից, ֆրանսերենի անորոշ դերանունները կարող են ստացականություն արտահայտել՝ համապատասխանելով հայերենի հատկացուցչին: Դերանունների և ածականների նշված խմբերից որոշչային կիրառություն ունեն հայերենի փոխածականաբար գործածվող դերանունները և ֆրանսերենի՝ դրանց համապատասխանող ածականները: Օրինակ՝

Ամեն առավոտ մայրս է առաջինն արթնանում: - C'est ma mère qui se réveille la première chaque matin.

Նա ինչ-որ փայլող բան տեսավ: - Il a vu quelque chose briller.

Ոչ մի կենդանի էակ: - Nulle personne vivante.

Որոշչային կիրառություն ունեն նաև հայերենի հատկանշային և քանակական հարաբերություն արտահայտող հարցահարաբերական դերանունները (որ, ինչպիսի, որպիսի, ինչքան, ինչչափ, որքան, որչափ, քանի) և ֆրանսերենի՝ դրանց համապատասխանող *quel* հատկանշային հարաբերություն արտահայտող անորոշ ածականն ու քանակական հարաբերություն արտահայտող *combien* հարցական մակբայը: Օրինակ՝ *Ցանկանում եմ իմանալ, թե որ զգեստն ես նախընտրում:* – *Je veux savoir quelle robe tu préfères.*

Ո՞ր զգեստն ես նախընտրում: – *Quelle robe préfères-tu?*

Քանի՞ քույր ունես դու: – *Combien de sœurs as-tu?*

Քանի՞ սենյակ կա տանը: – *Combien de pièces y a-t-il dans la maison?*

Որքա՞ն շաքար ես լցնում թեյի մեջ: – *Combien de sucre mets-tu dans le thé?*

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել, որ որոշչային կիրառություն ունեն հայերենի որոշյալ, անորոշ, ժխտական դերանունները և ցուցական ու հարցահարաբերական դերանունների մի մասը (սրանք այն դերանուններն են, որոնք ածականական կիրառություն ունեն): Ֆրանսերենում դրանց հիմնականում համապատասխանում են ածականները: Նշենք, որ վերջիններիս որոշչային կիրառությունն էլ հենց հիմք է ծառայում նույնանուն բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելու հարցում (ածական կամ դերանուն, երբեմն նույնիսկ մակբայ): Ֆրանսերենի բուն դերանունները հիմնականում գոյականական կիրառություն ունեն և գոյականների նմանությամբ կարող են նախադասության մեջ հանդես գալ որոշչային գործառնությով՝ նախդիրների ուղեկցությամբ: Ածականական արժեք ունեցող դերանուններից բացի հայերենում որոշչային կիրառություն ունեն նաև փոխանվանաբար գործածված դերանունները, որոնք գոյականի նմանությամբ նախադասության մեջ շարահյուսական տարբեր պաշտոններ կարող են զբաղեցնել, այդ թվում՝ դառնալ գոյականի լրացում:

Համառոտագրություններ

ԱՌ - Արթուր Ռեմբո, Բանաստեղծություններ, Ապոլոն, 1991

AR - La bibliothèque de poésie, tome 9, France loisirs, Paris, 1992

LM - Le Monde, 17 septembre, 2004

Գրականության ցանկ

1. Ս. Գ. Աբրահամյան, Վ. Ռ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, 2-րդ մաս, Ե., 1975
2. П.И.Заславская, И.Н.Юматова, Грамматика французского языка, изд. Лен. ун-та, Л., 1961
3. Grammaire Larousse du français contemporain, Librairie Larousse, 1981
4. M. Grevisse, Le bon usage, Duculot, 1980
5. E. K. Nikolskaia, T. Y. Goldenberg, Grammaire française, Moscou, 1982